

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԻՒԱԿՈՒԹԻՒՆ

Ո՛ր է համերայնութիւնը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի ամբողջ դասակարգի վիճակը. Հոգեւորականութիւնը իբրեւ գործող մարմին. Նամակ նկատներն օգտակար. Նամակ ներանդի. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազմ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ԲՈՐՄԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

Ո՞Ր Է ՀԱՄԵՐԱՅՈՒՆԻՒԹԻՒՆԸ

Կար մի ժամանակ, երբ մայրաքաղաքի մամուլը վերաբերվում էր գաւառական մամուլին ճիշդ այնպէս, ինչպէս փորձված, հուշակված հեղինակը մի տեսակ ներդաշնակութեամբ նայում է նոր սկսող աշակերտին, խակութեան և տհասութեան նշան համարելով նրա խելք ու աղբատիկ դրութիւնը: Ժամանակները փոխվեցան. այժմ Պետերբուրգի կամ Մոսկվայի մամուլի ջնջերը ստիպված են խոստովանելու, որ գաւառական մամուլը, ընդհանրապէս, առաջ է գնացել և գնում է, գործում է պատուով և անհուժեամբ, հսկայական պայքար մղելով իրան շրջապատող վշատեցուցիչ պայմանների դէմ: Տեսնում էք, որ մի խուլ, կորած անկիւնում հրատարակող լրագիր, որը հոգիւ է պահպանում իր գոյութիւնը, որին աշխատակցում են զբոյց ու մի նիւթական անկալութիւն չը սպասող մարդիկ, առաջ է տանում այնպիսի շիտակ, ազնիւ և առաջադէմ ուղղութիւն, որից պիտի կարմրէին մայրաքաղաքների խաւարամիտները: Վերջերս առկայ մի լուրջ ամսագիր, խոսելով մի հարցի մէջ գաւառական մի լրագրի բռնած ուղղութեան մասին, հիացած բացականչում էր. «Փառք և պատիւ մեր գաւառական մամուլին»: Այդպիսի ուրախութիւն յայտնում են, ի հարկէ, այն

օրգանները, որոնք չեն սարսափում ժողովրդի առաջադրվածութիւնից, որոնք հասկանում են թէ ինչ բարեբար ազդեցութիւն է գործում տպագրական ազնիւ խօսքը ժողովրդի, ամբոխի մէջ: Իսկ խաւարի, հրեւոթեան երկրպագուները, որոնք օձիք են պատուում, երբ առաջ է դալիս մի նոր, լուսաւոր երեւոթ, ինչ ասել կուզէ, կամ խորին արհամարհական լուծութեամբ են վերաբերվում գաւառներում գործող լրագիրներին, կամ, ծայրայեղ դէպքերում, կանչում են, որ պէտք է «միջոցներ ձեռք առնել»:

Թողնենք այս վերջին կատան, թողնենք, որ նա տապակի, տեսնելով առաջադրվածութեան ամեն մի նոր քայլ: Վերջները մամուլի այն մասը, որ գիտէ անկեղծ կերպով ոգևորվել գաւառական մամուլի առաջադրվածութեամբ: Ի՞նչ պէտք է անել այդ մասը: Զր բաւականանալով պատճառական համակարգներով, սիրուն գովեստներով, նա պիտի ձեռք մեկնէ իր փոքրիկ և յամենայն դէպս դեռ թոյլ եղբորը, պիտի օգնէ նրան, թէ ու թիկունք դառնար այնպիսի հարցերում, որոնք, ունենալով տեղական, սահմանափակ նշանակութիւն, շօշափում են ընդհանուր սկզբունքներ, խրատական են հասարակական տեսակէտից: Եթէ ի նկատի առնենք, որ գաւառական մամուլը, որքան է եռանդ ու բարի ցանկութիւններ ունենայ, այնուամենայնիւ, շատ թոյլ է՝ համեմատած մայրաքաղաքի մամուլի հետ, մեզ համար շատ պարզ կը լինի թէ ինչ օգուտներ կը ստանայ հասարակութիւնը, եթէ մայրաքաղաքի մամուլը ուղարկութեամբ վերաբերվէ գաւառի ձայնին, եթէ տեղական լրագիրներին հետ համերաշխ լինի, արձագանք տալ սրանց յարցերը: Հարցերին և վէճերին: Հեղինակաւոր ձայնի տէր մայրաքաղաքի մամուլն է, նա կարող ազդել հասարակական կարծիքի վրա, թե-

բեւ այդ կարծիքը դէպի այն կողմը, ուր պաշտպանվում է արարութիւնը և լուսաւոր միտքը: Բայց մայրաքաղաքի մամուլը շատ քիչ է կատարում իր այդ պարտականութիւնը: Գաւառը իր օրական հարցերով, իր պայքարներով մեծ մասամբ անյայտ է մնում մայրաքաղաքին: Եւ սա ցուալի է մանաւանդ այն պատճառով, որ գաւառները նոյն իսկ լրագրութեան տեսակէտից չեն ներկայացնում «աւետեաց երկիր», ուր միայն բարի սերմեր են տնկվում և աճում: Այլ, այդտեղ էլ կան դառն որոմներ, այդտեղ էլ գործում է խաւարամտութեան, մարդակերութեան թոյնը, որ այնպէս լճացած է մայրաքաղաքի յայտնի տեսակի օրգանների մէջ: Կուէլ այդ թոյնի դէմ ընդհանուր ոյժերով—դա կը լինէր արդիւնաւոր գործունէութիւնը:

Որքան մենք ձանաչում ենք գաւառական մամուլը, կարող ենք վկայել, որ նա մեծ ուղարկութեամբ է վերաբերվում մայրաքաղաքում տեղի ունեցող պայքարին, որ սկզբունքների շուրջն է պտտում, և համարենք միշտ շտապում է իր թոյլ ձայնը միացնել ազնիւ կուռքների ձայնի հետ: Բայց նոյն վերաբերմունքը մայրաքաղաքի մամուլի կողմից մենք, գաւառացիներս, չենք նկատում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՄԲՈՂՋ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՎԻՃԱԿԸ

Ներկայումս Մոսկվայում տեղի ունի մի համառոտական ժողով, որի ընդունված առարկան է մասնաւոր պաշտօնեաների և գործակալատարների վիճակը, մի դասակարգի, որ հարկւրաւոր և հազարաւոր ներկայացուցիչներ ունի մեր քաղաքներում: Ժողովը սկսվել է յուլիսի մէկից և կը վերջանայ վաղը, յուլիսի 10-ին: Նրա պարագլուխները հետաքրքրական են և մեր երկրի համար, և պէտք է ցուել, որ

Անդրկովկասից մասնակցում է միայն մի ներկայացուցիչ, Բազուից:

Ներկայ ժողովը երկրորդն է իր տեսակի մէջ: Առաջին ժողովը տեղի ունեցաւ երկու տարի առաջ Նիժնի-Նովոգորոդում, համառոտական ցուցանողէսի ժամանակ: Այդ ժողովում պարզվեցին մի քանի կարևոր խնդիրներ, որոնցից զընդունվեցին երկու կարևոր խնդիրներ, որ 1) տօն օրերի հանգստութիւնը դարձնել պարտաւորեցուցիչ բոլոր տեղերի համար, 2) պարագլուխների ժամերի տեղափոխումը սահմանված լինի ճիշդ կերպով: 3) գործակատարների հիւանդութեան ժամանակ յայտնի տուրք վերցվի նրա տիրույթից և 4) գործակատարների դրամագրի յայտնի օգնութիւն հասցնեն և նրանց տէրերը: Ներկայ, երկրորդ ժողովը, իբրեւ շարունակութիւն առաջին ժողովի, ընտնում է փոխադարձ ապահովութեան և օգնութեան ծրագիրները և սեփական օրգան ու բնութիւնը հաստատելու խնդիրները:

Բաւական է աչքի անցկացնել ժողովին մասնակցողներից մի երկուսի գեղուցումները՝ գաղափար կազմելու այն բազմաթիւ կարգիների մասին, որ ունեն գործակատարները և մասնաւոր պաշտօնեաները մեր առևտրականների ու մանրավաճառների մօտ: Այդ դասակարգը անպաշտպան, հարստահարված և մեծ զրկանքների ենթարկված մի դասակարգ է: Վաղ առաւօտից մինչև ուշ երեկոյ և երեմն մինչև կէս գիշեր նա ստիպված է ցցված մնալ խանութում, կատարելով զանազան գործեր, նա յաճախ ուժաւոր է դառնում անտանելի ծանր աշխատանքից և մեծ մասամբ վատ վարձատրվելով, վերջի վերջոյ ընկնում է անապահով վիճակի մէջ: Սամարայի գործակատարների ընկերութիւնը, ներկայացնելով ժողովին իր խորհրդածութիւնները, առաջարկում է օրէնսդրական կերպով սահմանել, որ առևտրականները, փոքրահասակ ծառայողներ վերցրած ժամանակ՝ սովորեցնեն նրանց առևտրի գործը, վարկեն ծառայողի հետ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱՍԻՐԱԿԱՆ ԹԻՒՆԻՐԻՒՆԻՆԻ

Կ. ՊՕԼԻՍ, յունիսի 22-ին

Զարմացանք, երբ կարդացինք «Բիւզանդիստի» 497 համարում հրատարակված հետեւեալ մէկ քանի տողերը:

«Եզդուռմէն գրուած նամակներէ կեմնամբ թէ Սանատարեան վարժարանին համար վերջին անգամ կը բացուած Ֆրանսացի ուսուցիչն ևս հրաժարել է և Կ. Պոլիս կը գաւառայ: Զարմանալի է Ֆրանսէի նկատման ճակատագրին այս մեծ հաստատութեան մէջ: Կարողեալք դասատու բնաւ չէ կենար հոն: Եթէ միայն ուրիշ մէկ կը լրջայ: Եթէ Սանատարեան տեսուչները բոլորովին վերջինն պահպանեցին և անոր տեղ գերմաներէն միայն ոյժ տան, որուն համար գերմանական ուսուցչի պէտք չունին արդէն, աւելի բնաւոր, մանաւանդ աւելի օգտակար կը լրջայ: Բայց ըսնի որ ամեն կարգերը ցարդ Ֆրանսէի դասեր աւելն են, զանոնք զրկելն և սորվածներն անաւարտ դատաւարտելն ալ անհրաժեշտ է պիտի ըլլայ, այս անպատեհութեան մի-անգամ ընդ միշտ վերջ տալու համար կառաջարկենք նոր կազմուող կարգերուն գերմաներէն միայն աւանդել հիմնապէս և ոչ թէ անուանապէս, աւելի ժամ և աւելի խնամք տալով, զի Սանատարեանի սաները ցարդ ոչ մէկ օտար լեզուէ մէջ զրաւոր երեւցած են գրգռաբարձաբար»:

Երբ յիշեալ հաստատութեան ամենաջերմ պաշտպան լրագիր մը, «Բիւզանդիստի» մէջ կը կարգանք վերանայեալ տողերն, երբ, մանաւանդ, այդ լրագրի խմբագրին գաւառին ալ, միմիայն վարժարանին ջատագով չաղակրատ խմբագիր մը ձեռք բերուելու համար, ձրի ապէս ընդունուած է վարժարանին մէջ՝ հակառակ տիրող կանոնադրութեան, դիւրին է երևակայել:

Եթէ մեծ հաստատութիւն կոչուած յիշեալ վարժարանն այսօր ինչ ամենաողորմելի վիճակի մէջ կը գտնուի:

Տիրահուշակ այդ թերթի խմբագիրը, իբրեւ շատ մօտէն տեղեակ այդ վարժարանի ներքին վիճակին, և իբրեւ ամենէն ուժգին չփոխն անոր, մայրաքաղաքի մէջ, ունեցած խնամակալ ժողովին ջօջ անդամներուն հետ՝ մանաւանդ պատրիարքին՝ որ ամենէն լաւ կը ճանչէ այդ մեծ հաստատութիւնը, փոխանակ խնդրոյն պարագաները ընկելու և պատճառներն հետազոտելու, երկու երեք տարիէ ի վեր իր ընդունած նոր սկզբունքին համաձայն, ճակատագրի կը վերադառնէ վարժարանին մէջ Ֆրանսացի ուսուցչի մը չի կրնալ կենան, և կը պահանջէ՝ որ «միանգամ ընդ միշտ» զաղդիբերէն վերնայ վարժարանին և անոր տեղ գերմաներէնի ոյժ տրուի:

Ենթադրելի կըցեր եմք այդ վարժարանի ընթացքն ուսումնասիրելու հաւաստի եմք որ հոն, որքան զաղդիբերէն լեզուն՝ աղքատ և գերմաներէնը պարտաւորիչ եղած է աշակերտի մը համար, և եթէ Ֆրանսացի դասատու մը այս մեծ հաստատութիւն և ալ մէջ չի կենար ու երթալ ու գալ մէկ կը լինի, գերմաներէնի դասատուն՝ Մագալեան՝ որ տեսուչներէն մէկը լինելու պատիւը կը վայելէ, միշտ հոն պատրաստ գտնուած է և տանուած տարիէ ի վեր գերմաներէն կաւանդի աշակերտաց: Արդ՝ յիշեալ մեծ հաստատութիւն և ալ մինչև ցարդ գերմանագետ աշակերտի մը դուրս չի գալը որ ճակատագրին տալու է. այս հարցման ինչ կը պատահանէ «Բիւզանդիստի» խղճամիտ խմբագիրը: Այդ խմբագիրը, պ. Բէշեան, որ վերջապէս ստիպուած է յայտարարել, անշուշտ իր տրուել խաթերն համար, թէ «Սանատարեանի սաները ցարդ ոչ մէկ օտար լեզուէ մէջ զրաւոր երեւցած են գրգռաբարձաբար»:

տանուած տարուայ մէջ, յորմենտէ հիմնուած է այդ մեծ հաստատութիւնն, իր հարկւրաւոր աշակերտներէն որ գրագէտն, որ հայագէտն, որ արուեստագէտն հանած է՝ որ պարտաւոր երևնայ, իբրեւ հոնջ Սանատարեան վարժարանի անկից վերջ հանելը ազնիւ «մաթա» հանքերուն:

«Զարմարութիւնը մարդուս բերանը գալի չի դնէր». պէտք է ուրեմն ճշմարիտը խօսենք, ուղիղ խորհրդածենք:

Նախ քննենք թէ ֆրանսացի դասատուն ինչու չի կենար հոն և երթալ ու գալ մէկ կը լրջայ, ճակատագրի է պատճառ այս կրթատուութեան՝ եթէ ոչ պատճառն է սոսիս որ ցորքան այդ մեծ հաստատութիւնը գոյութիւն ունեցած է՝ կը տիրէ վարժարանին մէջ, ճակատագրի է գոյութեանը՝ բացի «Բիւզանդիստի» պէս թրքամոլ թերթերու խմբագիրներէ՝ ոչ որ հաւաքող կրնային, բայց պատճառն է որ հաւատամբ կանգնու ալ: Անցեալ 1894 թուականին, ֆրանսացի դասատու մը՝ որ մասնաւոր խնամք Պարիզին բերուած և Երզրում, Սանատարեան վարժարանը խրկուած էր, ճիշդ, ինչպէս խոստովանած է «Բիւզանդիստի», չի կրնալ չի վերադարձում: Երբ Պարիզին չի Պոլիս, իր մէկ հայ բարեկամին՝ որուն անունն, ի հարկէ, օր մը կը յայտնուի, նամակ մ'ուղղելով, ի մէջ այլոց, հետեւեալ տողերը գրած էր՝ որ, կարծես, բաւական պեղծախօս են բացատրելու թէ ֆրանսացի դասատու մը ինչու չի կրնար կենալ այդ վարժարանին մէջ:

«Եստ զժբաղը եմ ըսելու» որ պիտի չը կըրնամ խոստումս կատարել՝ Սանատարեան վարժարանի համար իմ տեղս ուրիշ դասատու մը գտնելու և խրկելու մասին, գէթ խնայելու համար պարիզի մը՝ որ ինձ նման չի խաբվելով եղած pompeusement proclames խոստումներէն, «ամսական 230 ֆրանկի համար» իր անձը տու-

ածելու վտանգին մէջ չիմայ... Ահէ կրնար երեւաւկայել, ազնիւ բարեկամ, թէ ինչ դժոխային վիճակ մը անցուցի այդ վարժարանին մէջ՝ որ «աւելի կարելի է «Բարեկամի» խոնարհութիւնն «անուանել, քան վարժարան»։ Որ աշակերտը վարժագետին, տեսուչները՝ դասատուներուն, դասատուները՝ տեսուչներուն հետ կ'աւելնէ զգաւ ուրիշ բան չեն գիտեր: Հոն տեսուչներն «երբեք իրենց գործին տէր չեն: Միշտ զբօսանք, «խրախմբանք, և այլն զրկենք այնպիսի վիճակի մը մէջ դրած են՝ որ աշակերտներու վրա իրենց հեղինակութիւնը կորսնցնել տուած են: Պարիզի մը այս տեսակ անկարգութիւններու էջէ կարող տոկալ: Պիտի ամենայն դրեւու ձեռք վէճէ այդ վարժարանին մէջ կենական և սոսիս «գի պայմաններն, հակառակ իրենց ցոյց տրուածներուն՝ որով պարտաւորեցաւ ընդունել «վարժարանին ֆրանսերէնի դասախօսութեան պաշտօնին՝ որքան տխուր են, եթէ չի տեսնել, որ տեսուչներն և տեսուչներէն ի մասնաւորի «խնամք և հոգածութիւն վայելող դասատուներն ինչպէս գոհացուցիչ ցոյց մը կը վայելեն այդ վարժարանին մէջ, ամեն տեսակէտով: Եւս պիտի մեռնէ՝ եթէ ֆրանսիական հիւպատոս պարոն Պէրժոմբոն յատուկ հոգածութիւնը չի վայելէ: Պիտի առաքելի ինձ թերեւ, թէ՛ «խոստում մը չի կատարել՝ անարդարականութիւն է. ես այդ բնաւ չեմ ընդունիր. խօսք ետուի դասատու մը գտնել կարծելով թէ ինձ շնորհալու մ'ալ կրնար թերեւ գտնվի... և ետակայն Սանատարեան տեսուչներուն պէս՝ այդ չիմարը խաբելով՝ Երզրում խրկելու մեծ «անբարոյականութիւնը չէ կարող բնաւ ընդունել—pas le moins du monde—առանց բացատրելու այդ դասատուին՝ վարժարանին խոսակալն վիճակն...»:

Արդ՝ «Բիւզանդիստի» խմբագիրն ինչ կըսէ այս նամակին. կը զգայ արդեօք թէ ֆրանսիացի դասատուներն ինչու համար չեն կրնար կե-

մարդասիրաբար, չը ծեծեն, նրանց համար նշան-
շարան յատկացնեն ոչ թէ խոհանոցում և գաւի-
թում, այլ յարմար տեղում, երեխաներին չը յանձ-
նեն այնպիսի ծանր դործեր, որոնք վեր են ման-
կական սիրտի և վերջապէս մանուկները որոշ ժա-
մանակից յետոյ հարցաքննուին, որպէս զի ստուգվի
թէ ինչ է նա սովորել յայտնի ժամանակամի-
ջոցում: Մտկոյցի գործակատարները ընկե-
րութեանն պատգամաւոր Կուրնին, նկարագրե-
լով գործակատարները կեանքի աննպաստ պայ-
մանները, նրանց յաճախ հիւանդանալը, ուժաս-
պատ դառնալը, կատարեալ անապահովութիւնը,
առաջադրուած է դիմել կառավարութեան, խնդ-
րելով, որ ցերեկվայ մէջ առնուազն 1½ ժամ
յատկացվի գործակատարի հանգստութեան հա-
մար, որ տարվայ ընթացքում առնուազն մի
ամիս արձակուրդ տրվի գործակատարին, պահ-
պանելով նրա ուժերը, որ նրանց ընտանեկաննե-
րը ենթարկվին առողջապահական հսկողութեան
և յատկացվին մանկական իւրաքանչիւր ծա-
ռայողի համար առանձին:

Այս և սրանց նման են այն առաջարկութիւն-
ները, որ անվտանգ են Մտկոյցի ժողովում: Ի-
րանը՝ բարեխիղճ վաճառականները համա-
րում են գործակատարներին ներկայ վիճակը
անմխիթարական և դժմ չեն, որ որոշվեն մի քա-
նի պարտաւորեցուցիչ կետեր, որպէս զի կարե-
ւի լինէր բարեւոյնները մտցնել գործակատար-
ների կեանքի մէջ:

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐԻՆԻ ԳՈՐԾՈՂ
ՄԱՐՄԻՆ
(Նամակ խմբագրութեան)

Մենք ուշի ուշով հետևում ենք քահանայական
խնդրի մասին գրած յօդուածներին և մինչև
այսօր լոյս տեսածները, ըստ մեր հայեցողու-
թեան, երեք տեսակի են բաժանուած. մի քա-
նիստ ընդունում են առհասարակ հոգևորակա-
նութիւնը և մասնաւորապէս քահանայութիւնը
մի անհրաժեշտ պահանջ և ուղում են այդ դա-
տակարը լաւացած տեսել. մի քանիստ կուսա-
կրօններին մէկի ձգելով, պաշտպանում են ա-
մուսնացող հոգևորականութեան, իսկ մի քանի-
սն էլ միտում են հոգևորականի դերը, պատ-
ճառաբանելով, որ նրա երգը երգված վերջա-
ցած է: Յօդուածները էլ տպվելին, ուր մի կողմ
թողած պ. Մարութեան յարուցած հարցը, կողմ-
նակի պտղոյններով արծարծեցին նոր ինչերով,
ինչպէս արեց պ. Գ. Կ. Մշակին 104 և 105 հա-
մարներում, պ. Լևոն Սարգսեանի դէմ գրած
յօդուածում:

Մենք, խոստովանեմք, վախճանով ենք մո-
տենում այդ հարցին, ոչ թէ նրա համար, որ
հարցը մեզ համար պարզ չէ, այլ նրա համար,
որ չը լինի թէ «Վերօպայում հարկւրաւոր ան-
նալ, թէ ինչ դժուարին պատուհաս կը տիրէ
վարժարանին մէջ...»

Ընթերցողը ոչտը է լաւ համոզված լինի՝ թէ
այդ հաստատութեան մէջ ամեն ուսում անուա-
նապէս է և, շատ շատ, միայն կարող է պատ-
ական փօղի սնիւր ընծայել տիրող կառավա-
րութեան: Ընթերցողները կը ծանշենք՝ որ
միայն իրենց «փօղի» պաշտօնով անուանի ե-
ղած են. հարցուցէ՛ք էրբօրմընքնուր, խաբ-
բերդընքնուր, որո՞ւ որ կուզէ...: Քիւզանդիոն-
իս խմբագիրը՝ եթէ իրեք կը սիրէ այդ հաս-
տատութիւնը, եթէ կը փափակի անոր «հիմնա-
կան յառաջադիմութեան», եթէ, շահադիտական
և շողջօրթական պայմաններէ հեռու, գերմա-
նեթէնին հետ կը հաճի պաշտպանել նաև ֆրան-
սեթէնին օգտակարութիւնն ու կարևորութիւնը,
փոխանակ ձալ կա տա գլ ընկերով մեր գլխին
ուռեցնելու, թող ձանձրութիւն յանձն առնու մի-
անգամ, մայրաքաղաքին մէջ, Սանասարեան
վարժարանի խնամակալութեան դիւանատունն
երթալու և հոն պրպտելու անթիւ պաշտօնական
նամակներ՝ Վարդին հասած և պիտի տեսնե՛-
թէ ինչու Սանասարեանի այդ խեղճ սաները
միշտ ճանդօք եղած են ուսմանց և գիտու-
թեանց մէջ, և պիտի բարեհաճի՝ պատուհա-
սը բառնալու միջոցներուն վրա խորհել, անոր
վրա խօսել, և այդ բանին մէջ յաղդիլ իր վար-
պետութիւնները թմբկելու և այնու փրկելու
այդ մեծ հաստատութիւնն իր ամենատիւր վի-
ճակէն:

Դիմելեան սրբազանի պատրիարքութեան օ-
րովն էր, լաւ կը յիշեմք, երբ Սանասարեան
վարժարանի տեսուչներէն մին՝ յատենի Խնամա-
կալութեան, գրեթէ յանդիմանուեցաւ այն պատ-
ճառաւ որ, այդ համալսարանական երեսի վրա
թողնելով իր պաշտօնը, բազմաթիւ կառքեր և
սանականեր (trainees) գնած՝ վարձու կը բա-
նեցնէր և օրն էր ըսու անոնցմով կը դադէր,
առանց թողնելու նաև, ամեն օր, կառավարա-

կամ պտղոյններ անող՝ և ժողովրդական կեանքն
ուսումնասիրող սօցիոլոգները, իրաւաբանները,
լեզուադէանները մեզ, որ Ներօպա գէթ մի ան-
գամ պտտելու բաղդին չենք արժանացել, չառնե-
սյետ քաշվեցէք, ձեր խեղճ բանը չէ, դուք, որ
ոչ ազգերի անցեալ պատմութիւնն էք ուսումնա-
սիրել, ոչ Ներօպայի սօցիալական կեանքին էք
ծանօթ: Սակայն, օգտվելով այն ընդհանրացած
կարծիքից, որ գրելը դիպումաւորներին մօտ-
պիտի չէ, համարձակուած ենք մօտեցալ վա-
ճըր բողով ծածկած հարցին, նրա մի ծայրը
բարձրացնելու:

Պարոններ լեզուադէաններ, իրաւաբաններ,
հարկւր անգամ Ներօպա չըլդներ, դուք ջրի
երեսին զրկելն էք փշում և աշխատում մաք-
րել. ջրի յատակը չէք տնտղում. նեղութիւն
կրէք ինչեւ և այնտեղից հանել և՛ ցել և՛ մար-
գարիտ: Դուք խօսում էք հոգևորականութեան
մասին, վրդովում էք վեղար կամ ֆարաջա
տեսնելու, իսկոյն ձեր բերանից դուրս է թրու-
շում «անա ձրիակներ» և պատմականօրէն ճգ-
նում էք ապացուցանել, որ մեզ հոգևորական
պէտք չէ, առանց հաշիւ տալու թէ ում համար
էք դրում, և ի դիմաց որոնց էք ճառում: Այս,
գուցէ մեզ և ձեզ համար պէտք չէ հոգևորակա-
նը, բայց միթէ մենք ու դուք ենք աշխարհի ե-
րեսին և միթէ բոլորն էլ մեզ և ձեզ պէս են
մասնուած:

Մենք նախ դնում ենք այս հարցը. հայ ժողո-
վորդը այսօր կարող է առանց հոգևորականի
մնալ: Մեր պատմութեան բացասական է. ոչ,
չէ կարող մնալ: Գուցէ այդ չը կարողանալը
շատ վտանգաւոր է, և եթէ կարողանալ՝ շատ լաւ
կը լինէր, այդ հարցով չենք զբաղվում և ըստ
մեզ, աւելորդ էլ է զբաղվել, եթէ չենք կամե-
նում «անուրի մէջ ջուր ծեծել»: Կրկնում ենք,
մենք առանց հոգևորականի մնալ չենք կարող,
և այս համոզմանն ենք եկել ոչ թէ Ներօպա
պտտելով, ինչպէս պ. Սարգսեան և Գ. Կ.,
այլ մեր գեղջուկի, մեր քաղաքացու, մեր տղե-
տի և խեղճի, մեր խաւարաբնիկների և լուսա-
միտների հետ չփռնալ ունենալով, մենք ամեն
տեղ տեսել ենք հոգևորականի անհրաժեշտու-
թիւնը: Դուք, պ. Գ. Կ., թերեւ պ. Մարութեան-
ի, պ. Սարգսեանի և մի քանի տաննակ
մարդկանց հետ «ի սրտէ» ուղում էք թօթափել
հոգևորականի լուծը, բայց երբ գալիս է ձեր
պտակվելու օրակն, ձեր ակամայից հնազանդ-
ված էք տիրող կարգերին, երբ երեխայ էք ու-
նենում, ստիպված էք միտել, նմուշեցալին դուք
չէք թողնի առանց եկեղեցական կարգի թաղե-
րու: Այս դեռ դուք, դուք, որ եթերից էք նա-
յում մասնայի, ամբոխի վրա, չէք համարձակ-
վում տիրող կարգերից դուրս գալ և այդ չը կա-
րողանալու պատճառն այն է, որ քաջի ձեր
ցանկութիւններէց, բայց ձեր զգացմունքներից

կան պաշտօնատուններուն այցելութիւն տալու,
գրաքննութեան դերեր կատարելու նպատակա-
ւոր պաշտօններն, և սակայն, մէկ տարւան
մէջ տանեցելու դաս աւանդներ էք գերմանե-
րէն... Ո՛վ կրնայ ուրախալ միւս երկու տե-
սուչներուն ունեցած պաշտօնի խղճմտութիւնը
որ ուրիշ բանի նուիրուած չէ, եթէ ոչ պի-
սիւլի դեմքով, լաք անհերք, չըմշկելով, երե-
կոյններու, հարսանիքներու, այցելութիւններու
և այլ ասոնց նման զուարճութիւններու: Զուկը
իր գլխին կը հոտի կրքնու: Այլ երևակայելու է
թէ՛ ստորակարգիկա դաստատուներն ինչպէս խղ-
ճի մօտ կրնան կատարել իրենց պաշտօնը:

Մարդ աչքի առջև ունենալու է անցեալ տա-
րիներու լրարկութիւններն, և պիտի տեսնէ՝ որ
անթիւ անհամար բողոքներ եղած են վարժա-
րանին տարիներով առանց հայկական դասա-
տուի, առանց դաղիքաբէն դասի և այլն միա-
ցած լինելուն դէմ: Ո՛րքան քննադատական յօ-
դուածներ, խմբագրականներ գոհուած են տե-
սուչ կոչուած այդ բաղաձայն համալսարանական-
ներուն դէմ. որքան զանգուարագրեր ուղղուած
են կառակալատար պարոն Ներօպի, և սակայն
«ձայն բարբառոյ յանապատի» դարձած են ա-
մենքն այ, սա ամենատիւր պատճառով՝ թէ
ըստ տրամադրութեան Սանասարեան կտակի,
այդ անիւն տեսուչներն ան փոփոխ են
ց կ ե ան ս. ապա ուրեմն կը փորձուիք բռնել
թէ Սանասարեան բարբարա մէ ոչ թէ ազգին
զպրոց մը հիմնելով, ոչ թէ ազգատ սաներու՝
անոնց ուսումն ու սպասան ապահովելով՝ այլ
այդ երեք բարի ծառիկներուն՝ որ յանուն վար-
ժարանին, ցկեանս իրենց քէյֆը նային, իւ-
րաքանչիւրը իր իրաւունք վարձատրուելով: Երբ
տարեկան 45,000 բուրլի ծախս ընող վարժարան
մը, Կարնոյ պէս քաղաքի մը մէջ, ուր ամեն
բան շատ իրաւամատչելի է, այսօր պարտք կու-
նենայ նիւթապէս՝ քան արդիւնք՝ բարոյապէս,
դիւրան կը համոզուինք՝ պահ մը խորհելով՝ թէ

կան ուրիշ ֆակտորներ էլ, որոնք շատ անգամ
էլ ստիպում են ձեզ լռեցնել ձեր ներքին ձայնը,
ձեր զգացմունքները: Այդ ֆակտորները ձեր
մէջ բուն դրած, դարբնով ժառանգաբար ձեզ
վրա անցած սովորութիւնն է, ձեր չընկալատող-
ների հասարակական կարծիքն է, եթէ դեռ
տիրող օրէնքն էլ չը հաշուէ: Այս դեռ դուք
և ձեզ նմանները. ապա ինչ կասէք այն մաս-
նայի մասին, որը քաղ կը կրի ձեր դատա-
վիճուր եթէ լսի, չէ կարող երևակայել թէ մի
օր ինքը կարող է առանց հոգևորականի մնալ,
որի համար հայր չափ անհրաժեշտութիւն է հո-
գևորականի ներկայութիւնը: Ի՞նչ ունէք սրա
դէմ, պարոններ, կարող էք միտել այս:

II

Այժմ դնեմք երկրորդ հարցը: Ինչպէս պէտք
է լինի այդ մեզ համար անհրաժեշտ դասակար-
ըը, որ լաւ լինի: Այս հարցին պատասխանելը
արդէն շատ հեշտ է: Եթէ հոգևորականը կամայ
թէ ակամայ մի անհրաժեշտ մարմին է, որի ե-
րեսը ամենայն օր ս տ ի պ վ ա ժ ենք տեսնել, որի
հետ շարունակ պիտի շփուին ունենանք, ուրեմն
ընկերը, եթէ մեզանից ոչ լաւ, գոնէ մեզ պէս
լինի: Կարծում ենք, թէ ձեր սօցիոլոգիան էլ
այդ է ասում, ձեր տրամաբանութիւնն էլ այդ
խոստովանում: Մեզանից ոչ չէ ցանկանում, որ
իր ընկերը, իր բարեկամը, հարեանը, մի խօս-
քով ում հետ որ գործ ունի—լինի աղիւն, չի-
տակ, կրթված մարդ, ապա որքան պիտի ցան-
կանանք հոգևորականի ըստ ամենայնի լաւ լի-
նելը, որը եթէ ոչ մեր, գոնէ մեր կնոջ, մեր
եղբոր, աղջկայ, մեր ընտանիքի ամենամօտ ան-
դամն է:

Մի երրորդ և վերջին հարց. կարող է հոգևո-
րականը դեր կատարել հասարակական ասպա-
րեղում, թէ ոչ: Մի կողմ թողնեմք կրօնի նրան
յատկացրած դերը, աստուածային շնորհները և
այլն, ընդունենք հոգևորականին սոսկ իբրեւ
մարդ, մարդուց միակը, մարդկային հակումնե-
րով օժտված մի անհատ: Մեր արած սխալը
մինչև այժմ հենց այն է, որ հոգևորականին ըն-
դունել ենք միշտ գերմանական, հոգևոր և աշխա-
տել ենք փնտրել նրա գործերի մէջ միայն այդ
գիծը, մուսացութեան տարով մեր աչքի տեսածը,
որ հոգևորականը մեզ հետ է ապրում, նա էլ
այնպիսի անհատ է, ինչպէս մեզանից ամեն միւր
և ուրեմն կարող է իր փայլուն և սե՛ հետը
թողնել, ինչպէս ամեն մի աշխարհական: Մեր
համոզմունքով հոգևորականը, իբրեւ եկեղեցական
պաշտօնեայ, նման է միւս բոլոր պաշտօնեանե-
րին. ինչպէս որ բժիշկը, իրաւաբանը, ինժեներ-
ը իրանց որոշ պարագայութիւններն ունեն, նոյն-
պէս ունի իր որոշ պարագայութիւնները և հոգևո-
րականը, և ինչպէս որ աշխարհական պաշտօ-
նեաները իրանց որոշ տարածք ունեն, նոյնպէս

անուշտ նիւթական և բարոյական զեղծումներն
են որ՝ վարժարանը վարժարան լինելը բոլորու-
վին դարբեցուցած՝ և ֆրանսացի նամակագրին
ըսածին պէս, տեսակ մը բարեթոնական խառ-
նակութիւն դարձուցած են:

Ուրեմն դադանքը ճալ կատ ա գ ի ը չէ, այլ
պատուհասն է. մայր պատուհասն՝ երեք
տեսուչներն են: Յիշեմք այդ enfant gâté-
ներն ան փոփոխ են, անփոփոխ է նաև վար-
ժարանին ներկայ վիճակը: Աւելորդ է բառ մը
իսկ արտասանելը:

Արտասահմանեան հայոց թերթերէն մին նո-
րերս «Պէտք է վերադառնալ հայրենիք» վեր-
նագրով յօդուած մը կը հրատարակէր: Յնդուա-
ծագիրը կրէ՛ թէ «Թրքա-Հայաստանի, նամա-
նաւոր Խոյնաղի, Խոյնի, Բառնի դաւառ-
ները վերջին ժամանակները, համեմատաբար,
աւելի բարւոք վիճակի մէջ են գտնուած. թէ
քրդերը իրենց վաղեմի դրայիները (հայերուն)
վիճակի ապահովութիւնը իրենք են ստանձնել,
մի որ և է ըլրդ աղա իր շովանաւորութեան
ներքոյ է առել 4—5 հազ գիւղերի պաշտպա-
նութիւնը. թէ հարկաւոր դէպքում, երբ հայը
զրկանքի, կողոպուտի է ենթարկվում, նա հրա-
պարակ է դուրս գալիս, կուտւմ է իր հարեան
հայի իրաւունքը պաշտպանելու» և այլն, և այլն:
Մեծ պարտականութիւն կը զգամք հայ-
ցունելու այդ տխուր յօդուածը գրողին, թէ
Թրքա-Հայաստանից ուսկից ստացեր է այդ տե-
ղեկութիւններն: Մենք, որ յօդուածագիրէն աւել-
ի մտնէլ գիտեմք Թրքա-Հայաստանը, գիտեմք
նաև թէ իր պաշտպանած թուրքերն ինչպէս կը
ստանձնեն իրենց դրացիներու ապահովութիւնը,
թէ ինչպէս և ինչո՞ւ համար 4—5 գիւղի հայեր
իրենց պաշտպանութեան ներքեւ կառնուին: Եր-
բաւ բարակ ճառք, քարոզներ կարգաւոր հարկ
չի կայ հասկնալու համար այդ տեսակ թերթե-
րին՝ թէ Թրքա-Հայաստանի մէջ հայ գիւղացին

և ունի հոգևորականը իր ֆարաջան, վեղարը,
փիլօնը: Դուք ոգևորութեամբ էք պատմում փաս-
տաբանի փայլուն ճառը դատաստանական դահ-
լիճում արտասանած, որը թերեւ ձեզ ոչ մի օ-
գուտ էլ չէ տուել, կամ գովում էք բժշկին, որ
եռանդուն կերպով ամեն միջոց դործ է դնում
մի բանի օրով մարդու կեանքը երկարացնելու,
նոյնպէս էլ կարելի է պատմել հոգևորականի
գեղեցիկ կատարած ծէսը. ի հարկէ դուք չեք
ասի, որ նրա ջերմեանդ աղօթքները քանի
հոգի փրկեցին դժոխքից, այդ չէ երեւում, ու-
րեմն այդ մասին խօսել պէտք չէ, «մատերիա-
լիստներն» վերացական բաների մէջ համոզել
չի լինի, ուստի անցնենք հոգևորականի հասա-
րակական նշանակութեան:

Վերին ասպինք, որ հոգևորականը մարդ է,
մեր մէջ ապրող և մեզ հետ գործ ունեցող, մենք
նրա ոչ վեղարից պիտի խրանենք, ոչ ֆարա-
ջայից, ինչպէս չենք խրանում կօկարը, էպօլտը,
սիւրտուկ տեսնելու: Հոգևորականի հասարա-
կական նշանակութիւնը աւելի պարզ, բերեցի
կացուցանելու համար նախ խօսենք աշխարհա-
կան պաշտօնեաների հասարակական նշանակու-
թեան մասին, յետոյ կը համեմատենք հոգևորա-
կանի հետ: Ահա ձեզ մի բժիշկ, որ միայն իր
պացիներով հետ գործ ունի և ուրիշ ոչինչ չէ
անում. նրա կողքին մի ուրիշ իր հիւանդների
հետ գործը վերջացնելուց յետոյ խառնում է և
հասարակական գործերի մէջ, մի տեղ պահանջ
կայ սովի դէմ մաքառելու, ձեռներեցութիւն է
յանձն առնում, մի ուրիշ տեղ զպրոց պիտի
հիմնել, տեսնում ենք մեր բժշկին այնտեղ, մի
երրորդ տեղ կազմակերպվում է ժողովրդական
դատախօսութիւններ, դարձեալ բժիշկը այնտեղ
է: Դուք հաւատար կը դասէք այս երկու բժիշկ-
ներին, թէ մէկին կասէք «փեշաբար», իսկ միւ-
սին՝ իսկական մարդ: Նոյնը կարող է պատահել
իրաւաբանի, ինժեների, հայտարար դատաւորի,
մի խօսքով, ամենքի հետ. միթէ չէ կարող լի-
նել նոյնը և հոգևորականի-քահանայի կամ վար-
դապետի հետ: Կամ մի ուրիշ կողմ վերջենք.
Բաֆֆին իր վէպերով, Գամառ-Քաթիլիան իր
բանաստեղծութիւններով, Նալարեան, Նալբան-
դեան, Արծրունի իրանց հրապարակախօսական
գրչով ծառայում են հասարակութեան և օգուտ-
ներ են բերում, դատախօսները թատրոնական
բեմից ժողովրդական լեկցիաներ են կարդում
և դուք ուրախ էք, որ մարդիկ են կրթում, ա-
ռաջադիմական դարկ են տալիս: Միթէ նոյնը
չէ կարող անել քահանայն կամ վարդապետը ե-
կեղեցու բեմին և միթէ աւելի պատասխանատու
չէ վերջինիս դերը, որ գործ ունենալով դանա-
զան հասակի և հակացողութեան մարդկանց
հետ, ստիպված է աւելի լուրջ, աւելի խորաշն-
նին ուսումնասիրելու իր դատախօսութիւնը, քա-
րոյր: Թէ՛ դուք կարծում էք միայն սիւրտուկով

տէքը չէ ոչ իր հոգին, ոչ իր կեանքին, ոչ իր
պատւին, մասնաւոր վերջին ցաւալի վեպերէն
յետոյ. վկայ այդ կողմերէն ամեն օր պատրիար-
քարան հասած տխուր նկարագիրներն՝ որ փո-
շինքում մէջ կը մնան առանց ձեռք առնուելու,
վկայ դեռ վերջերս հրատարակուած հիւպատո-
սական տեղեկագրերը, և ամեն բանէ գերիվեր՝
ճշմարտութիւնը, խեղճ հայ գիւղացին,
սկիզբէն ի վեր և այս վերջերս ի մասնաւորի,
ձանձրացած բոլոր աղաներու վայրենի հարստա-
հարութիւններէն, կը ստիպուի քուրդ աղաներու
պաշտպանութիւնը խնդրել յանձնելով անոր իր
արքուն, և իր եղնով՝ աշխատելով անոր օգուտին
համար՝ բաւական սեպելով իր օրապահիւր:
1892 թուականէն ի վեր՝ յորում քրդական հրո-
սակութիւնն աւելի առաջ դնացած է կառավա-
րական թոյլտուութիւնով, քուրդ աղաների պաշտ-
պանութիւնը համարված այդ անօրէնութիւնն
ալ աւելի զօրութիւն գտած է: Հայ գիւղացի-
ներն՝ երբ վերջինեալ ստիպողական հարկի ներ-
քե քուրդ աղայի մը պաշտպանութեան տակ կը
մտնեն, աղան կուգայ իր բոլոր կը դնէ հայ—
գիւղի մէջ և տակաւ առ տակաւ, ու հայ գիւ-
ղացիները պաշտպանելու պատուակաւ, իր
մարդկութեան ալ քանի մը ընտանիք կը բերէ,
կը գետնէլ այդ գիւղերուն մէջ և գիւղացիք կը
ստիպվին անոնց ալ հող տալ: Օրին մէկը մըզ-
կիթ մ'ալ կը չինէ, ի մասնեք ալ կը հաստա-
տէ, և կը տեսնես՝ որ մէկ երկու տարեկէն, դա-
նազան խաթուութիւններով, այդ հայ գիւղերը
բոլորովին քուրդի գիւղեր կը դառնան և հայ
գիւղացին բոլորովին ձեռնթափ կը մնայ ամեն
բանէ: Մէկ խօսքով քուրդը կը պաշտպանէ
Թրքա-Հայաստանի մէջ՝ հայուն անպէս, ինչ-
պէս կը պաշտպանէ մէկն իր ձին, էջը, ոչխարը,
եղը և այլն: Համառօտ բացատրելով, անս անյ
է յօդուածագրի ըսած քրդական պաշտպա-
նութիւնն որ կատարեալ հայապաշտպանութիւն
է և ոչ ուրիշ բան:

Գիրտկ

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13